


## ՀՈԳԵՎՈՐ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Վեհափառ Հայրապետի հրամանով փետրվար-մարտ ամիսներին կատարվեցին հետևյալ նշանակումները.

Ա. **Արարատյան թեմ.** Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում առաջնորդական փոխանորդի օգնական-փոխանորդ նշանակվեց Տ. Գարեգին աբեղա Ներսիսյանը:

Բ. **Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի-վանք.** Վանահայր նշանակվեց Տ. Բագրատ աբեղա Գալստյանը:

Գ. **Ռուսաստանի և Նոր Նախիջևանի** առաջնորդակա՞ տեղապահի օգնական նշանակվեց, Ռոստովի հայոց եկեղեցու համար, Տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը:

Դ. **Սուրբ Խորվիրապ եկեղեցի-վանք.** Վանահայր նշանակվեց Տ. Գուրգեն քահանա Մուրադյանը:

Ե. **Էջմիածնի Սուրբ Շողակաթ եկեղեցի-վանք.** Վանահայր նշանակվեց Տ. Ղևոնդ քահանա Հարությունյանը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նոր պաշտոնյաներ ստանձնած վերոհիշյալ եկեղեցականներին և բարեմաղթում, որ նրանք իրենց հետագա նվիրյալ, բարեխիղճ աշխատանքով արդարացնեն Հայոց Հայրապետի վստահությունը և լինեն «Մշակք առանց ամօթոյ»:



Է—Ժ ԴԱՐԵՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԻՐՔ ԷՐ ԳՐԱՎՈՒՄ ՄԱՔԵՆՅԱՑ ՎԱՆՔԸ ԻՐ ՀՈԳԵՎՈՐ, ՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՈՎ։

ԱՅՍ ՎԱՆՔԻ ՀՈՎԱՆՈՒ ՏԱԿ ԾԱՂԿՈՒՄ ԷՐ ԱՊՐՈՒՄ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ԱԿՆԱՌՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐ-ՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿՆ ԷՐ «ՄԱՔԵՆՅԱՑ ԽԱՉՔԱՐԸ» (Թ ԴԱՐ), ԻՐ ՊԱՐԶ ՀՈՐԻՆՎԱԾՔՈՎ։

ԽԱՉՔԱՐԻ ՆԵՐՔԵՎԻ ՄԱՍԻ ԳՈՂԳՈԹԱՅԻ ՔԱՆԴԱԿԻՑ ԾԼԱՐՁԱԿՈՒՄ Է ԿԵՆԱՑ ԾԱՌԻ (ԱՐՄԱՎԵՆԻ) ՊԱՏԿԵՐՈՎ ՅԱՆՔԻ ՀԱՎԵՐԺԱՑՈՒՄԻ ԵՎ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՉՈՐՍ ՏԱՐՐԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆ ԽԱՉԱՔԱՆԴԱԿԸ։